

Աստուծոյ Որդիկութեան, համագործակից է  
ան մարդկային գործերուն և աղօթքին. ան  
կը սբրացնէ մարդկային հոգին, միտքն ու  
մարմինը, և զանոնք կ'ընէ տաճար Աս-  
տուծոյ: Գալով Ս. Հոգւոյն բնութեան,  
Պօղոս ոչ մէկ կերպով կը ջանայ սահմանել  
զայն. անիկա ամէնէն աւելի մտագրաւուած  
է շեշտել Անոր ներկայութեան և գոր-  
ծունէութեան մասին, զորս ներկայացու-  
ցած է թէ անանձ և թէ անձնաւորեալ եզ-  
րերով: Անանձնապէս Ս. Հոգին այն «ուժն»  
է կամ «պարզեց», որ կը տրոփ, կը մա-  
տակարարուի և կը հեղու հաւատացեաննե-  
րուն մէջ. անիկա ան «իւղն» է որով մարդ  
կ'օծուի. այն «մելանն» է որով կը ստորա-  
գրենք Քրիստոսի համար. զերչապէս երա-  
խայրիքը երկնային ժառանգութեան: Անձ-  
նաւորութեան եղրերը առաքեալին մօտ ա-  
ւելի յաճախագէպ են քան Ն. Կոտակարա-  
նական կանխագոյն գրուած քներուն մէջ: Այս  
մասին յատկանական են «Քնակիլ»,  
«առաջնորդել», «գիտուել», «գիտնալ»,  
«կամել», «գործել», «վշտակիլ» և այլն  
արտայայտութիւնները: — Դիտելի է գարձ-  
եալ որ Պօղոս իր բուրո գրութեանց մէջ  
հազիւ թէ ակնարկութիւնը կ'ընէ այն ա-  
ռընութեանց մասին զոր սանի Ս. Հոգին  
Հօր և Արդուոյն հետ Այս մասին չենք մըտ-  
ներ մարդամասնութեանց. միայն կը բա-  
ւականանք լսել թէ առաքեալին այս կերպ  
վարունքը արգիւնք է հաւանաբար անոր  
որ ինք տարուած է մանաւանդ Ս. Հոգւոյն  
Գալուստը, ներկայութիւնն ու գործունէու-  
թիւնը մատնանշելու:

ԳՐԻԳՈՐ ԱԲԴ. ՌՈԿԱՆԵԱՆ

(Նաբառակիւլի)



## ԼԵԶԵՐԻՑԳԻՏԱԿԱՆ

ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ<sup>(\*)</sup>

Այս անունները գործահաւան են Եղել  
նաև հայոց մէջ, այսինքն հայ անհատներ  
կրել են այդ անունները. բայց ստորական  
ձեւով օտար անունների թիւը շատ աւելի  
մծ էր. այսպէս անձնական յատուկ անուն-  
ներից՝ Մար Աբա Կատինայ, Աղդէ, Ղե-  
րաբին կամ Ղաբուբնա, Աբդիսոյ, Բարեհ-  
ծան, Բարգամայ, Բարեամ, Բեհրիս, Նմուկէ,  
իսկ տեղական անուններից՝ Դիլար, Խա-  
ղաբ (Խալբբ), Մալիկէ, Մուր (Ֆիւրոս), Մեծ-  
րայիմ (Նեփայսոս), Մերին, Յորգանան, Նիմ-  
ուկ, Նամին (Սամարիա) ևայլին: Երբ քրիս-  
տոնէութիւնը մտաւ հայոց մէջ, որպէսէտ ե-  
առաջին եկեղեցականները ասորի էին և Ս.  
Գիրքը առաջին անգամ ասորերէնից թարգ-  
մանուեց (և ոչ յունարէնից) ուստի և քրիս-  
տոնէական — երբայական անունները ա-  
սորական ձեւով մտան հայոց մէջ. յետոյ  
երբ եկան յոյն քարոզիչները և Ս. Գիրքը  
յունարէնի վրայից երկրորդ անգամ թարգ-  
մանուեց, ասորական ձեւերը ջնջուեցին և  
հետզետէ վերացան: Այս պատճառով մենք գտնում ենք  
հնագույն գրուած քներում մենք գտնում ենք  
միւնոյն անունը երկու ձեւով. այսպէս՝

ԱՍՈՐԱԿԱՆ ԶԵԽՈՎ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԶԵԽՈՎ.

Աբետաղովմ	Աբիսողոմ
Եղիսաբէր	Եղիսաբէր
Եղիշեկիա	Եղիշեկիա
Թիուլ	Թեսուլ
Ենմ	Ենմ
Շմուն	Սամփսոն
Աւաւուլիմ	Երուսաղէմ
Դիլար	Տիգրիս
Եղիօն	Եղիսէ
Մուր	Տիւրոս
Հարել	Աբէլ
Մուօն	Մովսէս
Նամին	Սամարիա

(\*) Նարունակարիւմ՝ մեծանուն հեղինակի «Պատ-  
մութիւն» հայ Լեզուի գործէն (ԺԱ. Գրախն):

Շառուղ  
Նմաւոն  
Նմաւել  
Ուռնայ

Սաւուղ  
Սիմեոն  
Սամուել  
Եղեսիա

Եթոտագայում, ինչպէս ասացնք, ասորական ձեւերը տեղի տուին յունականին և այսօր շատ քչերն են միայն՝ որ շարունակում են իրենց գոյութիւնը (ինչպէս նղեկ, փոխանակ Եղիսէ) և այն էլ իրեւ տարբեր անուն կարծուելով, ինչպէս Մուօէ, Նմաւոն, որնք շատեր չդիտեն թէ միւնոյն են Մովսէս և Սիմոն անունների հետ:

Հայերէնը անշուշտ ստացել է ասորերէնից նաև ոճական ձեւեր, բայց այս ժամանի առանձին ուսումնասիրութիւն չունինք տակաւին: Այդ բոլոր բառերը՝ որ յիշեցինք վերեւում, ասորերէնից հայերէն անցնելու ժամանակ առհասարակ հետեւում են հետեւալ տառագարծութեան:

ի - ի	յ - յ
ե - ե, է	կ, յ - ի
ու - ու	լ - զ
օ - օ, ոյ, ու	մ - մ
ը - ա, -, ե	ն - ն
ա - բառագերջում այ, այլուր ա	ս - ս
բ - բ, ւ - բ, ւ,	շ - շնջում է
գ, դ - գ	պ - փ, Ֆ - փ, ւ
դ - դ, ր	ց - ծ
հ - հ	կ - կ
զ - զ	ր - ր
իւ - իւ	շ - շ
ս - ս	ս, թ - թ

Տառագարծութեան ժամանակ կարելի է նկատել հետեւալ պարագաները:

1. Ասորերէնի բ, գ, դ, պ, թ բաղաձայնները ձայնաւորից յետոյ ննջուում են սեղմ, ւ, դ, պ, թ, թ. բայց որովհետեւ հայերէնը չունի այս կարգի ձայներ, ուստի գնում է նրանց փոխարքն պարզ պայթական բ: գ, դ, պ, թ. երբեմն էլ ւ, թ սեղմերի տեղ գտնում ենք թ (ինչպէս կաքալ, հաշիր, տափիլ, հաւօ, և կեղեւ, տերեւ, սուսեր) և դ ձայնի տեղ գտնում ենք ր, ինչպէս և պարսկերէնից փոխառեալ բառերի մէջ: այսպէս են հետեայ և ժամփուր, ծարիք:

2. Որովհետեւ հայերէնը կրկնակ բաղաձայն չի սիրում, ուստի ուր որ ասորեն ունի այդպիսին, հայերէնի մէջ գտնում ենք միայն մէկը: այսպէս բԲ գտնում են բ, զզ - զ, տթ - թ կամ ս, լլ - ն, պպ - փ,

ցց - ց, կկ - կ (ինչպէս գուրբա - գուր, իացցինա - կացին, եննեարա - բնար և պլին): Այսպարագային, ինչպէս նկատելի է, շատ անգամ բազաձայնի աստիճանը բարձրանաւմ է թաւի, որ շատ համապատասխան է կըրկնակին, այսպէս կակիրւա տալիս է կաքալ, ուր սկզբանաձայն պարզ կ դարձել է կ, բայց միջին կրկնակ կկ դարձել է ֆ: նոյնպէս մինչդեռ պարզ զ գտնում է ծ, կրկնակ ցց դարձել է ց' խացցինա - կացին բառի մէջ:

3. Մի խումբ բառերի մէջ՝ ուր որ ասորին ունի կրկնակ բազաձայն, հայերէնի մէջ առաջինը գտնում է ն: այսպէս են՝ բազզարա - բանգար, մազզբար - մանգաղ, բակբրա - բանքար, ցեցցրա - ծնծղայ, տապպւլա - ծամփուր, պազնան - անկան:

4. Ասորերէնի մէջ գոյականները երեք ձեւ ունինք: բացարձակ ձեւ, սաստկական ձեւ եւ բաղազրեալ ձեւ: Առաջինը ներկայացնում է բառի պարզ կամ նախնական ձեւը, երկրորդը աւելացնում է նրա վրայ ա վերջանորդութիւնը՝ որ նախնական շրջանում ասորերէնի որոշեալ յօնն էր, բայց յետոյ իր այս արժէքը կորցնելով՝ դարձաւ բառի անբաժան մասը, այնպէս որ ասորերէնի ամենակին գրական լեզուի մէջ անգամ բառի գլխաւոր ձեւը համարւում է սաստկականը, և միայն բարբառների մէջ այդ ա վերջաւորութիւնը համարւում էր յօդ: Վերջագէս երրորդ ձեւը ներկայացնում է այս երկուսի միջնը կամ խառնուրզը: Այսպէս զաղուր բառի ասորերէն ձեւերն են՝ բացարձակ զալու, սաստկական զալուրա, բաղադրեալ զալուր: Սական ամէն բառ այս երեք ձեւների էլ գործածական չէ: Կան բառեր որ միայն բացարձակ ու սաստկական ձեւներ ունինք, ինչպէս տերեւ և բացարձակ տերենք և սաստկական տարպա, իսկ շատ բառեր միմիայն սաստկական ձեռով են գործածական: Հայերէնի փոխառութիւնները առհասարակ ասորերէնի սաստկական ձեւից են: միայն թէ սաստկականի ա վերջաւորութիւնը հայերէնի մէջ երբեմն պահուած է - այ ձեռով և երբեմն էլ բոլորովին կտրուած: Առաջինի օրինակներն են՝ արեղայ, սահնայ, մաղնեայ, տունայ, առանայ, փեղենայ, բուռայ, ուռուայ, սակամունիայ, փեղենայ, բուռայ, արուբայ, ինգենայ, ութուայ, փիլսոփայ, ծնծղայ, միրիեայ, հանգանայ:

փորայ, ուռկայ, ոբունայ, ազուզայ, կապեալայ, փուտկայ, գուլպայ, ուռփայ, բուսփրայ, խնանայ, կասկարայ, ողբայ, ապուզայ, կարսայ, կաղայ, կրխայ, զուզայ, լումայ, շափիղայ, սափիրայ, սիդայ, կարկուայ, պոլոսայ, տոփայ, վալայ, ամիրայ, ասօրասիգայ (49 բառ), երկրորդից յիշենք խարը - ասորերէն խարբա, մախ - ասորերէն մախսա, գաղութ - գալուրա, խանութ - խանուրա հայլն: Թէ հայերէն փոխառութիւնները ասորերէնի սաստկական ձեւից են և ոչ բացարձակ ձեւից, դրան իրբե ապացոյց կարող են ծառապել այն բառերը, որոնց բացարձակը հայերէնից բոլորովին տարբեր է և միայն սաստկականն է՝ որ նման է հայերէնի. օրինակ

ՀԱՅՑ ԲԱՅԱՐՁԱԿ ՍԱՍՏԿԱԿԱՆ  
զգաք զեզզա զեզզըրա  
օպքաք օպքա օպքըրա  
ուրքաք ըրոււա ըրուվքա  
մագաղաք մըզզալլա մըզզըրա  
ողքա տեզեա տեզեալրա

Քանի բառի մէջ. այն է կասկարայ, կուպր, մանիւսակ, մաոկ (վերջընթեր ձեւը կարելի է բացատրել հայերէն նուազական ալ մասնիկով, իսկ մաոկ կամ իրանեան ազդեցութիւնը կամ օ-ի պատճառաւ): Նոյն ձայնը մախսա - մախ բառի մէջ թէն հնչւում է սեղմ, բայց հայերէնի մէջ դարձեալ տալիս է բ:

Ասորերէն պ, որ սովորաբար տալիս է հայերէն փ, բացառաբար լինում է պ՝ զոպայ, կուպր և զպար բառերի մէջ:

Ասորերէն ս, որ սովորաբար լինում է հայերէն ս, միայն երկու դէպքում տալիս է օ. այն է սապպիլու-ժիփիլա, մասարս-մասար:

Ասորերէն կ, որ սովորաբար դառնում է հայերէն կ, մի դէպքում եղել է բ. այն է զիկա - սիբ:

Ասորերէն Ը հնչումը, որ սովորաբար հայերէնի մէջ չնիւում է, մի անգամ զարձել է խ. այն է օարբալա - խարբալ:

Ասորերէն թ, մի անգամ եղել է ս, այն է տարմալ - տարմալ բառի մէջ:

Ասորերէն ն, որ սովորաբար տալիս է հայերէն ն, մի անգամ զարձել է մ. այն է նցիւին - Մծբին քաղաքի անցուշտ հայերէնում՝ լը լընայինի ազդեցութեամբ: Բայց հենց հայերէնի մէջ էլ կայ պահուած նմին ձեւը՝ նոյն. Էջ 140:

Ասորերէնի ձայնառները մինչգեռ սովորաբար հետեւում են վերի ցուցակի մէջ նշանակուած ձայնափոխութեանց, բայց անկանոն ձեւափոխութիւններ են կրում հետեւալ բառերի մէջ. սարնա - սեռն, օրյանա - ուռփայ, սեֆրա - սուփեր, կրլաֆա - կեղեւ, կիվի (փոխանակ լինելու կազավ), ցարցա - ծորոր, խարզըլա - խարզուլ (փոխանակ լինելու խարզալ կամ խարզալա):

Վերիվայր շրջուած մի ձեւ է յատկապէս շեալասա - ողբայ:

6. Ասորերէն բառերը հայերէնի անցած ժամանակ մասամբ հետեւում են ողման և ամփոփման օրէնքներին և միծ մասամբ ոչ. այսպէս նցիւին - Մծբին, ըրուվքրա - ուրքաբ, աղոլա - ազուզայ, նուզայա - հեեայ, նեյիխանայ - նեզենայ բառերի մէջ ի, ու ձայնառների սղման և ոյ - ու, եա - և ամփոփման օրէնքները գործադրուած են.

Այնու ամենայնիւ կան սակաւաթիւ բառեր, որոնք բացարձակ ձեւից են փոխառեալ. ինչպէս տեսեւ - բացարձակ տրեմ, իսկ սաստկականը տարպաւ:

5. Տառապարձութեան սովորական կանոնից շեղումներ նկատում ենք հետեւեալ բառերի մէջ:

Ասորերէն զ, որ սովորաբար դառնում է զ, միայն ձեր բառի մէջ լինում է ձ. այս հանգամանքը պատճառ է զառնում կարծելու որ ձեր թերեւ իրանեան ճամռով է հասել մեզ. հմմտ. ձիւր, ձազ, անդերձ, վարձ եալն, որոնց մէջ իրանեան զ ձայնի գէմ ունինք հայերէն ձ: Եոյն ձայնը զիկա - սիբ բառի մէջ գարձել է ս, իսկ Զաւդափի - Մաւդի յատուակ անուան մէջ եղել է ծ.

Ասորերէն խ, որ սովորաբար դառնում է հայերէն խ. մի քանի բառի մէջ լինում է հ. այսպէս են հանուր (խանուր, հասիւ, հաղբ եւ Նուփինաղիսոյ) (յատուկ անուն, ասորերէն Նուլիսալոս): — Մի դէպքում զառնում է կ. այն է խացցինա - կացին. այս երեսը թւում է թէ հայ հողի վրայ առաջացած է. — մի դէպքում էլ իսպառ չնշւում է. յախուրա - յամոյր:

Ասորերէն կ, որ սովորաբար տալիս է հայերէն բ, բացառաբար տալիս է կ մի

միջնդեռ արթրա - արթրայ, ուռկա - ուռկայ, նիլեա - նիլեայ, լումա - լումայ, տի-  
ֆոռա - տիֆոռայ և այլն բառերի մէջ ի, ու  
պահաւած են:

Այս բաղրոր մասնաւոր գէպքերը կամ անկանոնութիւնները երեւան են հանում ասորական փոխառութեանց աղբիւրն ու ժամանակը: Հայերէն լեզուն որ իր ձայ-  
նական հարստութեամբ շատ անգամ ըն-  
դունակ էր ճիշտ տառապարձելու ասորա-  
կան հնչումները, ինչո՞ւ տեղ տեղ պիտի թիրանար: Օրինակ եթէ ասորերէն Արա-  
յատուկ անոնը կամ մասսա բարոր արտա-  
սանուէին Աւա, մախսա, կարող չէր հա-  
յերէնը գնել Աւա, մախս, փոխանակ զնե-  
լու Աբա, մախս, ինչպէս գտնում ենք,  
քանի որ թէ՛ և թէ՛ խ ձայները շատ ծա-  
նօթ և սովորական ձայներ էին հայերէնի  
մէջ: Խսկ եթէ այսպէս չէ վարուել, նշա-  
նակում է թէ այն աղբիւրը՝ սրտեղից օգ-  
տուել է հայերէնը, հնչում էր ո՛չ թէ Աւա,  
մախսա, այլ Աբա, մախս: Արդէն այս բա-  
ռերի գրութիւնը եւ նրանց ծագումն ու  
ստուգաբանութիւնը միաձայն ասում են՝  
որոնց թ, կ հնչումը աւելի կին է. Աւա,  
մախսա բառերի մէջ ւ և ի հնչումները  
գրում են թ, կ տառերով և միայն ասո-  
ռերէնի ընթերցանութեան մասնաւոր օ-  
րէնքների համաձայն՝ հակառակ զրութեան  
կարգացումը են և, իս: Ստուգաբանութեամբ  
էլ Աւա ծագում է ար «հայր» բառից եւ  
մախսա կցում է արտք. մախս և ասուր.  
մախսու բառերին: Այդ աղբիւրը այն ասո-  
րական բարեառն է, որ խօսում էին հարա-  
ւային Հայաստանի յարակից գաւառների  
ասորիները, և որոնց հետ շաբունակական  
յարաբերութեան մէջ էին հայերը:

Ընդունելով որ հայերէնի ասորական  
փոխառութիւնները մի որոշ ասորական բար-  
բառից են, ոչ միայն բացատրում են վե-  
րոյիշեալ բոլոր մասնաւոր պարագաները  
(որ մենք անկանոնութիւն էինք կարում)՝  
իբրև բարբառային առանձնայատկութիւն-  
ներ, այլ և պարզուում է զանազան ասորե-  
րէն բառերի գաւառական հնչումը: Միևս  
սեմական լեզուների համեմատութիւնը և  
ուրիշ հանգամանքներ շատ անգամ գալիս  
են հաստատելու այդ հնչումը և նրա հետ  
էլ մեր ենթագրութեան նշառութիւնը, Ցի-  
շենք այստեղ դրանցից մի քանիսը:

Ասորերէն բազարա, մազգրլա, խալքրա,  
ցըլա, տափուլա և այլանտա բառերը հա-  
յերէնի մէջ ունենալով բանգար, մանգաղ,  
խնեկար, ծնծղայ, տամփուլ և անկան ձեւը,  
ցոյց են տալիս՝ որ ասորերէնի յիշեալ ան-  
ծանօթ կամ կորած բարբառի մէջ զոյց բա-  
զամայններից առաջնին հնչուում էր ն: Ար-  
դարե կարելի չէ ասել որ գրանք հայերէնի  
մէջ այդպէս ձեւափոխուած լինէին, որով-  
հետեւ նման մի երեսոյթ՝ որ առանապարակ  
տարօրինակ է, հայերէնի մէջ զոյութիւն  
չունի: Գզ, կկ, ցց, պպ չեն կարող յան-  
կարծ զառալ նո, են, նծ, մփ, մինչգեռ  
հանգառակը կարելի է. այսպէս հայերէն  
խննու որ փոխառութեամբ անցին է ասո-  
ռերէնի, բարձել է այս լեզուի մէջ խազ-  
գուրա, նախապէս անցնելով խանգուրա  
ձերց: Նմանապէս վերոյիշեալ ե բառերը  
նախապէս ունէին ունցային ձեւ: Բազգարա  
գալիս է բանցարա ձերց, և մանցայերէնի  
մէջ բառու ունի բանցարա ձեւը. — մազգրլա  
գալիս է մանցրլա ձերց (հմտ. արամ. ին-  
չանա). — ցեցցրլա թէկ ծագում է ցըլցրլա  
ձերց (հմտ. երբ. ցելցրիմ, արամ. ցալ-  
ցրլա, արմատը ցլ հնչել), բայց տարանմա-  
նութեամբ զոյց լերից առաջինը անշուշտ  
ոոյն անծանօթ ասորական բարբառում զար-  
ձել էր ն և բառը հնչուում էր ցենցրլա,  
ինչպէս ունինք եթապակ. ցանցրլը = ծնծղայ:  
— խալքր թէկ կցուում է երբ. իբեկար,  
արամ. իլիմար, սաբ. խանքար, զիփակ:  
Եւերի հետ, որոնց մէջ ունցական չկայ,  
բայց ահա ունինք և խպատ. զինջոր, որի մէջ  
ն ձայնը երեւում է և որից հետեցնուում ենք  
որ ասորական նոյն բարբառում էլ բառը  
հնչուում էր խնեկար — միայն տափուլա  
— տամփուլ բառն է, որ համազօր սեմա-  
կան ձեւը չունենալով՝ կարող չէ իր նա-  
խաւոր ունցականը երեւան հանել, բայց  
որ միւսներից հետեցնելով պէտք է ընդու-  
նենք թէ այս բառն էլ յիշեալ ասորական  
անծանօթ բարբառում հնչուում էր տամփու-  
լա, ամէն կասկածից գուրս է: Բնդգականի  
գործածութիւնը յիշեալ բարբառում ոչինչ  
չունի տարօրինակ, որովհետ շատ սեմա-  
կան լեզուների մէջ ասովորական երեսոյթ՝ է  
և դդ, սս, բբ հնչուում են նդ, նս, նբ:

ՊՐՈՒ. Հ. ԱՅԱՀԱՅԱՆ  
(Տարուալէկ)